№ 258 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20 1901 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20 № 258

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թերթումս գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

Թագուհի, Մարիամ եւ Գողոս Տէր-Դաւթեանները ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին եւ ծանօթներին առաջինն իր Թանգագին ամուսնու, իսկ երկրորդն ու երրորդը իրանց սիրելի որդու՝ Ներսիսեան դպրոցի վերակացու

ԴԱՒԻԹ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 17-ին Նաւթլուղի զինուորական հիւանդանոցում։ Ամփիոքը կը կատարվի այսօր, նոյեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 5-ին, հանգուցեալի բնակարանում—Կրասնոգորսկայա № 30. իսկ յուղարկաւորութիւնը կը սկսվի տանից վաղը, նոյեմբերի 21-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կորոշի առաջիկայ ժողովը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կենցէրտ. Ռուսաց ներկայացումները. Նամակ Նոր-Բայազէտից։ Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կուրութեան պատճառները.

Ի՞ՆՉ ԿՈՐՈՇԻ ԱՌԱՋԻԿԱՑ ԺՈՂՈՎԸ

Առանձին մի հետաքրքրութեամբ սպասում են մեր նաւթարդիւնաբերողները այն ժողովին, որ պէտք է գումարվի Բագումի և սկսէ իր պարապմունքները նոյեմբերի 29-ից։ Ժողովի պարապմունքների ծրագրի մէջ կայ մի շատ կարևոր կէտ, որը և կը գրաւէ յատուկ ուշադրութիւն։ Այդ կէտը նաւթի վրա դրվող պետական հարկի փոփոխութեան հարցն է։

Ինչպէս յայտնի է, նաւթի գինը ներկայումս իջել է մինչև 6 և $6^1/_2$ կոպէկի պուդը։ Նաւթագործը ամեն մի պուդ նաւթի վրա ծախք ունի 2—$2^1/_2$ կոպէկ, երբեմն և աւելի՝ նայած նաւթահորի դիրքին, ստացվող նաւթի քանակութեան և ուրիշ հանգամանքների։ Եթէ ներկայ գնից հանենք այդ ծախքը, կը մնայ միջին թւով 4 կոպէկ մի պուդի համար, մինչդեռ նաւթագործների մի խոշոր մասը ամուրդի ժամանակ պարտաւորվել է վճարելու կառավարութեան ոչ միայն 5—6, այլ և 10—12 կոպէկ։ Ակներև է, որ նաւթագործները մեծ վնասի մէջ են և որ նրանք ներկայ պայմաններում անկարող են շարունակել իրանց ձեռնարկութիւնը։ Նրանց մի մասը, ապագայ բարձր գների յոյսով, վճարում են կառավարութեան սահմանված տուրքը և շարունակում են գործը, միւսները այլ ևս անկարող են դիմանալ նոր զոհաբերութիւնների և յետ են քաշվում։

Ինչպէս դուրս գալ այս նեղ վիճակից։

Այդ հարցին նաւթագործները պատասխանում են այսպէս. թող կառավարութիւնը ամրդախօսութեան ժամանակ չը նշանակէ վճարը փողով, այլ նաւթի որոշ բաժնով։ Փոխանակ վերցնելու 4—10 կոպէկ ամեն մի պուդ նաւթից, թող վերցնէ, օրինակ, նաւթի, $^1/_{10}$, $^1/_5$, $^1/_4$, $^1/_3$ մասերը։ Այն ժամանակ նաւթագործը կարող կը լինի շարունակել իր ձեռնարկութիւնը, իսկ կառավարութիւնը կը ստանայ իր հարկը նաւթով, որ կարող է գործադրել թէ արքունական գործարաններում, երկաթուղիներում և հիմնարկութիւններում և թէ վերջապէս ծախել վաճառանոցներում։

Երբ որ նաւթի հարկը կը վերցվի նրա որոշ մասով, այն ժամանակ կարիք չի զգացվի նաւթի գինը բարձրացնել արդիւնագործութեան զարգացման համար և կարելի կը լինի պետական շահերը պաշտպանելով տալ ազգաբնակութեան ձեռքը էժանագին լուսաւորութեան և վառելիքի նիւթ։

Անկասկած գանձարանի համար աւելի հեշտ է փողով ստանալ հարկը և մի անգամից վերջացնել իր հաշիւները, բայց նաւթային գործի մէջ նկատվող ձախորդութիւնները և ժամանակ-ժամանակ կրկնվող ճգնաժամերը ստիպում են բարգացնել գործը արդիւնաբերութեանը նպաստելու նպատակով։

Հարցը հեշտ կարող է մնալ, երբ նա վերաբերում է ապագայ ամուրդներին։ Կառավարութիւնը կարող է նշանակել նոր ձևի ամուրդներ։ Բայց ի՞նչպէս պէտք է օգնել այն նաւթագործներին, որոնք արդէն անցեալ ամուրդներում յայտնի պայմաններով վերցրել են նաւթահողեր։ Ինչպէս փոխել եղած պայմանները և ի՞նչ սկզբունքներով ղեկավարվել։ Ահա մի դժուար հարց, որ ասպարէզ է եկել և սպասում է իր գործնական լուծման։

Ներկայ գների ժամանակ նաւթագործը, որպէս զի վնաս չունենայ, չէ կարող 4 կոպէկից աւելի վճարել կառավարութեան, ուրեմն պարտաւոր է 6 կոպէկ նաւթագնից գոնէ մի երրորդ մասը, այն է 2 կոպէկ, իր ձեռքին պահել։ Իսկ եթէ նաւթի գինը բարձրացաւ մինչև 9 կոպէկ, այդ ժամանակ նաւթագործը տալով կառավարութեան $^2/_3$-ականը, այսինքն 6 կոպէկ և պահելով իր ձեռքին $^1/_3$-ականը, այն է 3 կոպէկ, կունենայ միայն 1 կոպէկ զուտ արդիւնք։ Կառավարութիւնը, ինչպէս տեսնում էք, ոչինչ չէ կորցնում, իսկ նաւթագործը ազատվում է վնասից և ստանում է մի որոշ շահ, որը այնքան մեծ կը լինի, որքան կը բարձրանայ նաւթի գինը վաճառանոցում։ Եւ եթէ, օրինակ, նաւթի գինը բարձրանայ մինչև 18 կոպէկ, ինչպէս եղաւ անցեալ տարի, այն ժամանակ նաւթագործի ձեռքին կը մնայ $^1/_3$-ականով 6 կոպէկը, որից կը գոյանայ զուտ արդիւնք 4 կոպէկ։

Մեր վերցրած չափը, այն է երրորդ մասը, ծանր չափ է, երբ նաւթի գինը էժան է։ Մենք առաջ բերինք նրան ցոյց տալու համար ներկայ հանգամանքների էութիւնը իր ծայրայեղ պայմաններում։ Անկասկած նաւթագործները աւելի մեծ շահերի մասին են երազում, երբ նրանք ձեռնարկում են գործի։ Սակայն նրանք պէտք է կարողանան այնպիսի մի միջոց մշակել, որ իսկապէս կարողանան համոզել մինիստրական շրջանները, թէ կայ եղանակ և սկզբունք փոխարինելու եղած ամուրդների գները այս կամ այն մասով։

Ի՞նչ կասէ առաջիկայ ժողովը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Այսօր լրանում է ռուս նշանաւոր քննադատ Դոբրոլիւբովի մահվան քառասնամեակը։ Դոբրոլիւբով այնպիսի գրական գործիչներից չէ, որոնք շուտ մոռացվում են. նրա հեղինակութիւնները այժմ էլ կարդացվում են մեծ հետաքրքրութեամբ եւ մինչեւ այժմ հրատարակվել են վեց անգամ։ Մի գեղեցիկ փայլ ունի այդ անունը. նա վաթսունական ազատարար թւականների ամենախոշոր գրական գործիչներից մէկն է, այն թւականների, որոնց այնպիսի ոգեւորութեամբ նկարագրել է կամ, աւելի ճիշտ ասած, երգել է մեր հանգուցեալ Զանչեանը։ Վաթսունական թւականները մեծ նշանակութիւն ունեն եւ մեզ, հայերիս, համար։ Դա այն շրջանն է, երբ ռուս առաջաւոր ինտելիգենցիան բարձրացրել էր ազատութեան, մարդկութեան դրօշակը։ Այդ բարձր-գաղափարական շարժման մէջ կրթվում եւ ոգեւորվում էին նաեւ այն հայ երիտասարդները, որոնք մեր գրական եւ հասարակական ասպարէզում այնքան նշանաւոր դեր կատարեցին։ Դոբրոլիւբովը այդ անմոռանալի ժամանակների փայլուն ասաղն էր։ Մի զարմանալի տաղանդ էր դա։ Մեռաւ 26 տարեկան հասակում եւ գրականութեան մէջ գործեց ընդամենը երեք տարի։ Բայց որքան մեծ էր այդ գործը, որքան խոր ազդեցութիւն թողեց ոչ միայն ժամանակակիցների, այլ եւ ապագայ սերունդների վրա։ Գ. Սմբատ Շահազիզի «Ազնիւ ընկեր» երգը, որ մի ժամանակ մեր ամբողջ ժողովրդի երգն էր, նմանողութիւն է Դոբրոլիւբովի «Милый другъ я умираю» երգին։ Ահա ինչպէս է բնորոշում «Журналъ для всѣхъ» ամսագիրը այդ փայլուն դէմքը։

Նա մեծ էր նրանցից, որոնք առաջնորդում են եւ ճանապարհ են ցոյց տալիս։ Ուր էր եւ ինչի մէջ էր նրա կրօնը, այսինքն այն գործը, որ նրա համար կենսական անհրաժեշտութիւն էր, սրտի սրբութիւն, գործ, որի հետ նա ձուլվէր, միանար, այնպէս որ խլել նրանից այդ գործը կը նշանակէր զրկել նրան կեանքից։ Այդ կրօնը Դոբրոլիւբովի համար՝ հասարակութեան եւ ժողովրդին ծառայելն էր։ Նա իր համար չէր ապրում, նա ապրում էր բարձր նպատակի համար, որի կատարեալ իրականացումը կը լինէր ընդհանուր երջանկութեան իրականացում այս աշխարհի վրա։ Գործ, գործ, իսկական, կենդանի, իրական գործ, որ մի քայլ առաջ կը տանէր՝ չարը, հարատահարութիւնը, կամայականութիւնը, նախապաշարմունքները յաղթահարելու համար յանուն ժողովրդական մասսայի երջանկութեան, որ բնականաբար եւ անհրաժեշտօրէն ձգտում է, որ լաւ լինի»—ահա Դոբրոլիւբովի իսկական նշանակութիւնը։ Դոբրոլիւբովը—գործի մարդ է եւ սովորեցնում է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՒՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ի՞նչն է պատճառը այդ հիւանդութեան։ Հասարակ ժողովուրդը կարծում է, թէ այդ աչքացաւն առաջանում է ցուրտ քամու ազդեցութիւնից, ոմանք էլ հաւատացած են, իբր թէ երեխան ծնվելիս նայած է լինում արեւին։ Ի հարկէ, սրանք սխալ հակացողութիւններ են։—Սա մի վարակիչ հիւանդութիւն է եւ հասարեա միշտ երեխային վարակում է հէնց ինքը մայրը ծննդեան (երկունքի) միջոցին։ Եթէ երկունքի մէջ գտնվող մի կնոջ սեռական գործարաններից հոսում է թարախ, այս դէպքում նորածին երեխան կը ստանայ աչքերի թարախային-բորբոքումն։ Մօր այդ թարախը ծննդեան ժամանակ ընկնում է երեխայի աչքերը եւ վարակում։ Առհասարակ վարակումն վերոյիշեալ ձեւով է կատարվում, սակայն երբեմն կարող է այլ կերպ պատահել։ Երեխան մի որ եւ է հրաշքով կարող է չը վարակվել երկունքի ժամանակ, թէեւ մօր սեռական անդամները հիւանդ լինեն. այս դէպքում ազէտ ասածայրն է վարակում, երեխային լողացնելով, նրա մարմինը, գլուխը եւ երեսը լուանալով մի եւ նոյն ջրի մէջ, կամ թէ մայրն է վարակում իր երեխային, չօշափելով կեղտոտ ձեռքերով նրա երեսը եւ աչքերը. միւս դէպքում երեխան վարակվում է, երբ նրան պառկեցնում են մօր կեղտոտած անկողնի շորերի վրա։

Պէտք է լաւ յիշել, որ նորածին երեխայի աչքերից ծորած թարախը նոյնպէս վարակիչ է, ինչպէս եւ սեռական գործարաններինը, եւ կարող է վարակել ամեն մարդու աչքեր, եթէ նոյն իսկ մի կաթիլ ընկնի այդ աչքերը։

Մթթէ կարելի է ազատ պահել երեխայի աչքերն այդ վարակումից։—Կարելի է եւ միշտ կարելի է։ Եւ եթէ երեխաները վարակվում են, հիւանդանում են եւ կուրանում, այս դժբաղդութեան մեղքն ամբողջապէս ընկնում է ծնողների վրա, շնորհիւ սրանց անուշադրութեան, անփութութեան եւ գլխաւորապէս՝ ազիտութեան։ Սակայն ինչ կերպով կարելի է ազատ պահել երեխայի աչքերը վարակումից։—Անհրաժեշտ է ծննդաբերութիւնից առաջ բժշկել մօր սեռական գործարանների հիւանդութիւնը. իսկ եթէ մի որ եւ է պատճառով հիւանդութիւնն անխնամ է թողնված, այն ժամանակ պէտք է երկունքից անմիջապէս առաջ ջրով մաքուր լուանալ ծննդականի սեռական գործարանները եւ յետոյ ախտահանել կարբոլեան թթուատով (3%)։ Այս դէպքում նորածին երեխան կարող է ազատ մնալ վարակումից։ Սակայն միաժամանակ պէտք է երեխայի վրա ուշադրութիւն դարձնել։ Հէնց որ երեխան աշխարհ եկաւ, անհրաժեշտ է իսկոյն եւ եթ նրա աչքերը դրսից սրբել մաքուր, թաց շորով. մի ուրիշ շորով երեսը սրբել, իսկ յետոյ բաց անելով կոպերը, աչքերի մէջ կաթացնել մի մի կաթիլ լապիսի 2%-ային լուծվածքից։ Այս վերջին գործողութիւնը միմիայն բժիշկը կամ ուսեալ մանկաբարձուհին կարող են կատարել, ուստի դերադասելի է, որ այդպիսի հիւանդ կնոջ երկունքի ժամանակ ներկայ գտնվէր բժիշկ կամ ուսեալ մանկաբարձուհի։ Ես հաւատացած եմ, որ եթէ հիւանդ կինն իմանայ, թէ ինչ սեռական վտանգ է սպառնում իր երեխային, հաւանական է, որ նա ամեն ջանք գործ կը դնէ նորածին երեխային ազատելու վերահաս դժբաղդութիւնից, իսկ իրան՝ խղճի խայթոցներից։

Սակայն ինչ անել այն դէպքում, երբ երեխային չեն խնամել, ուստի եւ նա հիւանդացել է։—Երբէք չը լսէք պառաւ կանանց, որ ձեզ կը հաւատացնեն, թէ այդ աչքացաւն ինքն իրան կանցնի եւ հաւատ մի ընծայէք «հաքիմ—դալյաքների» դեղերին. սրանք նոյնքան խաւարամիտ են, որքան եւ նրանց դիմող հասարակութիւնը։ Հաւատացէք միմիայն գիտութեան խօսքին։ Շտապեցէք ուրեմն խնամել երեխայի աչքերը, հակառակ դէպքում նրանք անդառնալի կերպով կը վնասվեն։ Ես ոչ օքի խորհուրդ չեմ տայ այս աչքացաւը դարմանել տնային միջոցներով, այստեղ անհրաժեշտ է բժիշկ։ Աւեն մի բժիշկ, նոյն իսկ ոչ մասնագէտ—ակնաբոյժ, պիտի իմանայ (եւ իմանում էլ է) բուժել «նորածին երեխաների աչքերի բորբոքումն»։ Սովորաբար բուժումը շարունակվում է մի ամիս, որի ընթացքում ամեն օր երեխային բերում են բժշկի մօտ խնամելու. իսկ տանը երեխայի աչքերը պէտք է միշտ մաքուր պահել բժշկի խրատների համաձայն։ Եթէ միայն մի աչքն է հիւանդացել, պէտք է պաշտպանել առողջ աչքը վարակումից։ Այս դէպքում էլ մաքրութիւնն ամենալաւ միջոցն է։ Հիւանդ երեխային պառկեցնում են այնպէս, որ ցաւագար աչքից թարախը չընկնի առողջ աչքը։ Երեխային պէտք է յաճախակի լողացնել եւ փոխել սպիտակեղէնը. գործածված բամբակի կամ շորի կտորներն այրել եւ միշտ նորը գործածել. երբէք չը սրբել մի եւ նոյն շորով հիւանդ եւ առողջ աչքերը։

Թէ որքան օգտակար են վերոյիշեալ միջոցները՝ երեւում է նրանից, որ այն երկրներում, ուր խստիւ կատարում են այս միջոցները, «աչքերի թարախային բորբոքումից» կուրացած երեխաներ հազարեա թէ չը կան։

Զարմանալի մարդիկ նոյնպէս կարող են հիւանդանալ այդ աչքացաւից, սակայն աւելի սակաւ, քան թէ երեխաները. բայց աւելի վը-

միայն գործել։ Նրա ժամանակն այդպէս էր։ Այն ժամանակ ամեն ինչ ծառայում էր աշխատութեան, նոյն իսկ սէրն էլ։ Այն ժամանակ դատում էին այսպէս. «Մարդը ապրում է ոչ թէ իր անձնական եսասոյ երջանկութեան համար, այլ աշխատանքի համար։ Սէրը շարժում է եւ ոգեւորում է աշխատանքը։ Ամեն ինչ—աշխատանք, ամեն ինչ նրա համար եւ յանուն նրա։ Աշխատանքը կեանքի սրբութիւն սրբոցն է եւ մարդու աղօթքը»։

Եւ, ի հարկէ, այդպիսի գաղափարներով տոգորված սերունդն էր կարող գլուխ բերել այն մեծագործութիւնները, որոնք ռուսաց պատմութեան պարծանքն են կազմում։ Համամարդկային երջանկութեան համար աղնիւ աշխատանքը այդպէս սրբացնող մարդիկ միայն իրանց հայրենիքին չեն պատկանում, այլ ամբողջ մարդկութեան։ Մենք էլ, այսօրվայ քառասնամեակին, երախտագիտութեամբ եւ հիացմունքով յիշատակենք այն 26 ամեայ երիտասարդին, որ իր գեղեցիկ ժամանակի փայլուն ներկայացուցիչն էր։

ԿՕՆՑԵՐՏ

Կիրակի, ամսոյ 18-ին, Թիֆլիսի ժողովրանի դահլիճում կայացաւ կոնցերտ Մ. Ա. Բաբայեանի (դասատուի երգեցողութեան Թիֆլիսի Կայսերական երաժշտական ուսումնարանի), մասնակցութեամբ բարիտոն Է. Գ. Բրոդջիի, ջութակահար Գ. Գ. Ակիմովի եւ պիանիստ Ֆ. Կ. Քեանների։

Մ. Ա. Բաբայեան իր երաժշտական կրթութիւնը սկսել է Թիֆլիսում եւ շարունակել է արտասահման՝ Պարիզում—երգեցողութիւն եւ Դրեզդենում—նուագել դաշնամուրի վրա։ Նրա ձայնը փոքր լիրիկական սոպրանո է, որի միջին բեգիստրը աւելի մշակված է, քան թէ ներքեւի եւ վերեւի բեգիստրները։ Նրա երգելու ձեւը աւելի մեղմ է, քան ուժեղ, եւ մեղմ (p. pp.) աւելի է աջողվում, քան ուժեղ (f. ff.)։ Ըստ երեւոյթին կոնցերտատուհին ինքն էլ է իմանում այդ, որով բոլոր ժամանակ երգում էր գրեթէ ոչ ուժեղ (mezzo-voce)։ Երգչուհու տեմպերամենտը խաղաղ է եւ ծրագիրը ոչ աղմկալից։

Երկրորդ բաժանմունքում երգչուհին Ջութակահար Ակիմովի հետ նուագեց Շուման Op. 121 սոնատը, որը իբրեւ կատարումն լաւ անցաւ, բայց իբրեւ ընտրութիւն՝ միապաղաղ էր։

Ակիմով դեռ շատ երիտասարդ ջութակահար է եւ շատ եռանդով է նուագում։ Բրոդջի, Թիֆլիսին սիրելի բարիտոն, ինչպէս միշտ, այս երեկոյ եւս լաւ տպաւորութիւն թողեց իր երգով։

Կեաներ, հին եւ հմուտ պիանիստ, մասնակցեց ամբողջ կոնցերտին անդադար, որի փորձառութեան շնորհիւ բոլոր համարներն էլ աջող անցան։

Հասարակութիւն շատ կար. դիմաւորում էին արտիստներին անվերջ ծափահարութեամբ։ Ի վերջոյ Մ. Ա. Բաբայեան հասարակութեան խնդրանօք երգեց «Արի իմ սոխակ» եւ «Կռունկ» երգերը հայերէն։

Երգչուհուն շատ լաւ ընդունեցին եւ յարգեցին երկու ծաղկեայ կողով եւ մի փունջ մատուցանելով։

Կարա-Մուրզա

ՌՈՒՍԱՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Շաբաթ, Նոյեմբերի 17-ին, ռուս դրամատիքական խումբը Մոսկվայի Կայսերական «Փոքր Թատրոնի» դերասանուհի տիկին Տիրասպոլսկայայի հրաժեշտի բենեֆիսին ներկայացրեց «Զազա», պիէս 5 գործողութեամբ, թարգմանված ֆրանսերէնից։

Այս պիէսը Պարիզի կեանքից է վերցված եւ գրված է երեք տարի առաջ, յատկապէս ֆրանսիական նշանաւոր դերասանուհի տիկին Բէժանի համար, որ Զազայի տիպի հանճարեղ ստեղծագործողն է։

Զազան Պարիզի «demi-monde»-ի յայտնի ներկայացուցիչներից է, որ համաշխարհային քաղաքի Café chantant-ներում երգչուհու դեր է կատարում։

Դիւֆրէն անունով մի երիտասարդի հետ սիրահարվելով այս կոկէտ, թեթեւսոլիկ ֆրանսուհին սիրոյ փրկարար ազդեցութեան տակ միանգամայն կերպարանափոխվում է։ Կաֆէշանտանների ապականված մթնոլորտից, եռուն, անհանգիստ կեանքից հեռու՝ նա սկսում է աւելի խաղաղ, կանոնաւոր կերպարանք տալ իր գոյութեան։ Բայց Զազայի բաղդաւորութիւնը եւ կեանքի խաղաղութիւնը կարճատեւ է լինում. վեցերորդ ամսում նա տեղեկանում է, որ Դիւֆրէն ոչ թէ ամուրի, այլ ամուսնացած մի պարոն է։ Այս անախորժ յայտնագործութիւնից յետոյ Զազան Դիւֆրէնից ձեռնթափ է լինում եւ նորից իր նախկին արուեստումն է պարապում։ Նա Նոր Աշխարհում մեծ հռչակ է ստանում եւ ոսկու, դոլլարների որսով է պարապում։ Երբ Դիւֆրէն Ամերիկայում դարձեալ հանդիպում է Զազային, առաջարկում է նրան վերականգնեցնել ընդհատված նախկին յարաբերութիւնը, բայց Զազան մի ինքնատիպ յամառութեամբ երեսը շուռ է տալիս։

Պիեսն թէեւ գեղարուեստական տեսակէտից բաւական կաղում է, բայց գրված է բուն ֆրանսիական ոգով, զուրկ չէ բեմական արժանաւորութիւններից եւ լի է էֆէկտներով։

Խաղն ընդհանրապէս շատ աջող պէտք է համարել։ Տիկին Տիրասպոլսկայեան, ինչպէս երեւում է, Զազայի դերը մեծ հմտութեամբ էր ուսումնասիրել եւ անշուշտ տեսած պէտք է լինի Զազայի դերակատարների նախատիպին՝ տիկին Բէժանին։ Տիկնոջ խաղը առաջին գործողութեան մէջ, աւր դերասանուհիներից շատերն են սայթաքում, շատ բնական էր, համարձակ եւ ազատ, բայց որ գլխաւորն է՝ չափազանցութեան ոչ մի հետք չէր կրում, չափաւոր էր, ոչ ծայրայեղ։ Ինչպէս առաջին գործողութեան մէջ կոկետութեան՝ այնպէս էլ հետեւեալ գործողութիւնների ընթացքում սիրոյ, խանդի եւ ինքնասիրութեան զգացմունքը նա շատ լաւ կարողացաւ պատկերացնել։ Երրորդ եւ չորրորդ գործողութեան մէջ տիկնոջ խաղը միանգամայն փայլուն էր։ Տիկինը վարձատրվեց որոտալից եւ յաճախակի ծափահարութիւններով. անպակաս էին նաեւ պսակներ եւ ծաղիկների տարափը։

Միւս դերակատարներից մեզ վրա լաւ տպաւորութիւն թողեց տիկին Ալինսկայեան, որ կատարում էր Զազայի մօր՝ Անախսի դերը. տիկնոջ խաղը շատ տիպիքական էր եւ միանգամայն օրինակելի։ Պարոն Արկունինի Դիւֆրէնը, ինչպէս եւ պարոն Չէքիպայի Կասկարը նոյնպէս աջող պէտք է համարել։ Իսկ փոքրիկ Դենսկայեայի Տոտոն միանգամայն գրաւիչ էր եւ մեծ բաւականութիւն պատճառեց ունկնդիրներին։

Զազայից յետոյ ներկայացվեց ռուս տաղանդաւոր գրող Չէխովի «Արջը». կոմէդիա մէկ գործողութեամբ։ Կոմէդիան շատ բովանդակալից չէ, բայց խաղը, հնարիւ տիկին Վոլգինայի եւ պ. Եակովլէվի, աջող անցաւ։

Թատրոնը բոլորովին լիքն էր։

Վ. Նալբանդեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՑԱԶԷՏԻՑ

Նոյեմբերի 13-ին

Նոյեմբերի 10-ին, քաղաքային դումայի դահլիճում, տեղի ունեցաւ մեր քաղաքի աւագի եւ նրա օգնականի ընտրութիւնը՝ նախագահութեամբ վաճառական պ. Հ. Խաչատրեանի։ Ժողովին ներկայ էին 13 հոգի ձայնաւորներ։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին աւագի պաշտօնի համար պ. Գ. Արծրունի 12 ձայնով ընդդէմ 1-ի, իսկ օգնականի պաշտօնի համար՝ պ. Ս. Բատիկեան 7 ձայնով ընդդէմ 5-ի։ Երկուսն էլ համեմատաբար ինտելիգէնտ անձինք են եւ շատ մօտ ծանօթ են քաղաքային ու հասարակական գործերին։

Այդ ընտրութիւնը շատ հետաքրքրական էր նրանով, որ նախ մի ամբողջ տարի ձգձգվելով՝ գրեթէ խաղալիք էր դարձել մի բուռն մարդկանց համար, իսկ երկրորդ՝ շատ մաքեր էր պղտորել։ Անցեալ տարի, ուղիղ Նոյեմբերի 12-ին, կայացել է քաղաքային վարչութեան անդամների ընտրութիւն, բայց աւագի եւ նրա օգնականի ընտրութիւնը ձգձգել եւ հաստատել էին մինչեւ այսօր։ Վարչութեան անդամների հաստատելուց յետոյ ընտրեցին ընտրողական ժողովներին նախագահողի պաշտօնի համար մի ձայնաւոր, որի ընտրութեան առիթով բողոք տրվեց նահանգապետին, եւ սա բեկանեց նախագահի ընտրութիւնը։ Ապա ամիսներից յետոյ հաստատվեց նորընտիր նախագահը, որ նոյնպէս ամիսներից յետոյ ընտրութիւն կայացրեց. այդ ընտրութիւնն այն հետեւանքն ունեցաւ, որ երկու թեկնածուներ հաւասարաչափ ձայներ ստանալով՝ չը հաստատվեցին Երեւանի պ. նահանգապետի կողմից, որը հրամայեց նորից ընտրութիւն կատարել։ Եւ ահա այդ պատճառով անցաւ մի ամբողջ տարի, եւ վերջ ի վերջոյ այժմ վերջապէս աջող ընտրութեամբ։ Բայց, ըստ երեւոյթին գոնէ, այդ ընտրութեամբ էլ չեն խաղաղվում շատ մաքեր, որոնք կրկին դրժգոհութիւն են յայտնում։ Աւելորդ ենք համարում բացատրել այդ դժգոհների տրամադրութիւնը. գուցէ նրանք անձնական եւ այլ հաշիւների տեսակէտից են այդպէս վարվում, բայց մեր կողմից խորհուրդ կը տայինք մեր քաղաքի հասարակութեան այդ անդամներին համերաշխ լինել բոլոր գործիչների հետ եւ ձգտել գործելու քաղաքի եւ հասարակութեան շահերի տեսակէտով։ Իսկ նորընտիրների վրա պարտականութիւն է դրվելու ձեռնարկել քաղաքի պակասութիւնները լրացնելու գործին։ Թէ պ. Արծրունին եւ թէ պ. Բատիկեանց, եթէ բարի կամք ունենան, կարող են անշուշտ արդարացնել ժողովրդի յոյսերը եւ այդքան աղմուկներից յետոյ՝ չնչափելի գործեր կատարել մեր աղքատիկ քաղաքի եւ հասարակութեան օգտին։

Աւելացնենք եւ այն, որ պ. Գ. Արծրունու գործունէութիւնը շատերին յայտնի է մեր շրջաններում, իսկ պ. Ս. Բատիկեանց մէկն է այն երիտասարդներից, որոնք ձգտել են ջախջախել վաչխառուական սկզբունքը գաւառներում։ Նա միակն էր, որ պատռել տուեց այն թանձր վարագոյրը, որի ետեւում թաքնված էին անարդար վաչխառութեան գաղտնիքները մեր գաւառում։ Պէտք է էլ աւելի խոր թաքցնել հասարակութեան ցաւերի արմատը։

Գ. Սինանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ մենք ստացանք հետեւեալ հեռագիրները.—Բաթումից՝ «Այսօր Նոյեմբերի 18-ին, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, հայ-լուսաւորչականների եւ հայ-կաթոլիկների եկեղեցիներում հոգեհանգիստներ կատարվեցին հայր Ալիշանի յիշատակին։ Ախալցխայից. «Մեծ ծերունու մահը կայծակի հարուածի նման ապշեցրեց մեզ։ Այսօր ի ներկայութեան բազմաթիւ աղօթողների, կատարվեց հոգեհանգիստ եւ արտասանվեցին ճառեր։ Խոնարհվում ենք մեծ մատենագրի, գիտնականի եւ հայրենասէր-քաղաքացու աճիւնի առաջ։ Մեծ Ալիշանի հանճարի արեւը, փարատելով տգիտութեան խաւարը։ ոգեւորում է մեզ եւ տանում դէպի եղբայրութիւն եւ միութիւն։ Թող Նահապետի հզօր ոգին յաւիտեան սաւառնի իր ժողովրդի վրա, որին նա սիրում էր անհուն սիրով։

—

Վրաց խմբի երկրորդ հանրամատչելի ներկայացումը, որ տեղի ունեցաւ կիրակի, Նոյեմբերի 18-ին, աւելի մեծ հասարակութիւն էր գրաւել քան առաջինը. թատրոնը համարեա լիքն էր։ Այս անգամ, ժողովրդին դիւրութիւն տալու համար, օթեակների տուժակներն էլ ծախվում էին կուպոնների։ Այդ գիշերը խաղացին «Բռնակալ» կոչված ժողովրդական դրաման։ Ներկայ եղող հասարակութիւնը շատ գոհ մնաց ներկայացումից։ Ներկայացումը վերջացաւ գիշերվայ 11 ժամին, որը շատ ուրախալի է, աչքի առաջ ունենալով բանւոր դասակարգի պայմանները։

—

Բացի սովորական պարագաներից, որոնք տրվում են ցուցահանդէսի ժամանակ, կովկասեան ցուցահանդէսի վարչութիւնը որոշել է տալ մանր տնայնագործներին զանազան գործերի համար։

տանգաւոր կերպով։ Վարակումն առաջանում է այն ժամանակ, երբ սուզանակային թարախի մի կաթիլ ընկնում է աչքը։

Մեզ մօտ, առաւել եւս Թուրքերի մէջ, կայ մի վատ սովորութիւն, այն է՝ աչքերը լուանալ մէզով։ Երեւակայեցէք, որ աչքերը մէզով լուացող մարդը սուզանակ ունի. այս դէպքում վարակումն անխուսափելի է. անձամբ տեսած եմ թշուառներ, որոնք հիւանդացել եւ կուրացել են այդ վնասակար սովորութեան շնորհիւ։ Զարմանալին այն է, որ աչքերը մէզով լուանալու սովորութիւնը մտել է ժողովրդի մէջ պաշտօնական բժշկականութիւնից։ Արաբների մէջ եւ միջնադարեան Եւրոպայում մէզը պատուաւոր տեղ էր բռնում գեղատան մէջ։ Շարլ դը լ'Օրմ, Հանրի IV-ի պալատական բժիշկը, ամեն օր առաւօտները մէզով աչքերը լուանում էր, «որ սուր տեսողութիւն ունենայ»։ Այժմ, ի հարկէ, բժշկականութեան մէջ մէզը, իբրեւ դեղ, չէ գործադրվում, սակայն ժողովրդի ստոր խաւերում նա շարունակում է դեր կատարել եւ յաճախ դժբաղդութիւնների պատճառ դառնալ։

Միւս վտանգաւոր աչքացաւը տրախօման է (Վանի բարբառով՝ խշրուկ), որը նոյնպէս վարակիչ հիւանդութիւն է։ Ռուսաստանում միջին թւով տրախօմայից կուրացածները կազմում են կոյրերի ընդհանուր թւի 35%-ը։ Կանայք աւելի շատ են վարակվում այդ աչքացաւով, քան թէ տղամարդիկ (100 տղամարդին ընկնում է 122 կին)։ Տրախօմայով հիւանդանում են գլխաւորապէս 25 տարեկանից մինչեւ 60 տարեկանը, սակայն ոչ մի հասակ չէ կարող ազատ մնալ նրանից։

Այս դէպքում նոյնպէս աչքի ներսի լորձաթաղանթն է հիւանդանում։ Եթէ շուռ տանք վերեւի կոպը, կը տեսնենք լորձաթաղանթի վրա մանր բշտիկներ, որոնք սկզբում նմանութիւն ունեն թարմ ձկնկիթի հետ, իսկ ինքը՝ թաղանթը կարմրած է եւ հաստացած։

Տրախօման մի նենգաւոր աչքացաւ է. մարդ կարող է երկար ժամանակից ի վեր ունենալ նրան եւ իսկի չը զգալ մինչեւ այն ժամանակ, երբ հիւանդութիւնը կը սկսի վտանգաւոր կերպարանք ստանալ։ Այս դէպքում տրախօմայի բշտիկները սկսում են քերել եղջրաթաղանթը (աչքը թակել) եւ հիւանդը գանգատվում է, թէ կոպերի տակ մի ինչ-որ բան (աւազ) է շարժվում։ Այդպէս շարունակվում է երբեմն շատ երկար ժամանակ։ Վերջապէս հիւանդը սկսում է նկատել, որ իր տեսողութիւնը հետզհետէ վատանում է։ Նայեցէք այդ ժամանակ նրա աչքերը եւ դուք կը տեսնէք, որ եղջրաթաղանթը պղտոր է եւ երբեմն վերեւից պատած արեան անօթներով (առողջ եղջրաթաղանթը զուրկ է արեան անօթներից)։ Հանցնի մի երկու տարի, եւ այդպիսի հիւանդի կոպերը կը սկսեն կուչ գալ, իսկ թերթերունքները շուռ կը գան դէպի ներս (աչքում մազ կը բուսնի—ինչպէս հասարակ ժողովուրդն է ասում)։ Սրանով գործն արդէն վատթարանում է, դէպի ներս ուղղված թերթերունքներն իրանց դերը—աչքի պաշտպան—կատարելու փոխարէն, ամեն մի աչքաճպալիս քերում են եղջրաթաղանթը, որի վրա սկսում են երեւալ «խոցիկներ». տեսողութիւնը խիստ նուազում է եւ կարող է բոլորովին կորչել։

Դիտմամբ մի քիչ երկար նկարագրեցի այս աչքացաւը, որ դուք պատահած ժամանակ, առանց բժշկի օգնութեան, կարողանաք ճանաչել, թէ ձեր դիմացի մարդը, ձեր ծանօթը, ձեզ հետ միասին ապրողը ինչ տեսակ հիւանդութիւն ունի, եւ այդպիսով օր առաջ զգուշանաք վարակվելուց։

Գլխաւորապէս վարակվում են խմբովին ապրող մարդիկ, օրինակ, գիշերօթիկ աշակերտները, զորանոցային բանուորները, զինուորները եւ այլն։ Փոշին, խոնաւութիւնը, բնակարանի նեղուածքութիւնը, կեղտոտութիւնը, առհասարակ չքաւորութիւնը, նպաստում են տրախօմայի տարածման։ Մարդիկ վարակվում են մէկը միւսից, երբ մարդ գործածում է այդ աչքացաւով հիւանդի երեսսրբիչը, ամանը, քնում է սրա անկողնում եւ այլն։

Լեռնային երկիրներն ազատ են տրախօմայից, ինչպէս, օրինակ Ղարաբաղը եւ այլն։ Սակայն անձամբ տեսել եմ զարաբաղցիներ, որոնք վարակվել են տրախօմայով Բագուում կամ Անդրկասպեան երկրում եւ տուն վերադառնալով, վարակել են իրանց ընտանիքից շատերին։

Այժմ հասկանալի է, թէ ինչպէս պէտք է զգուշանալ այդ հիւանդութիւնից։ Մաքրութիւնը եւ վարակման էութեան հասկացողութիւն՝ ահա միջոցներ, որոնք կարող են մարդուս նպաստել պահպանելու իր եւ յաճախ նոյնպէս իր մերձաւորների աչքերն այդ զարհուրելի աչքացաւից։

Ով որ մի անգամ հիւանդացաւ, նա պէտք է ունենայ առանձին իր տեփական երես լուանալու ամանը, իր առանձին երեսսրբիչները. նա պէտք է կարելոյն չափ հեռու ապրէ առողջներից եւ աշխատէ, որքան կարելի է, շուտ բժշկել իր աչքերը, որովհետեւ տրախօման սկզբներում հեշտութեամբ է բժշկվում, իսկ հնանալուց յետոյ ամիսներ, տարիներ է քաշում։

Նորածին երեխաների աչքերի թարախային բորբոքումն, ծաղիկ եւ տրախօմա—ահա երեք պատճառներ, որոնցից գլխաւորապէս կուրանում են մեզ մօտ եւ որոնց դէմ անհասար, հասարակութիւնը եւ պետութիւնը պէտք է մաքառեն։ Միւս պատճառների մասին կը խօսենք պատեհ ժամանակին։

Բժիշկ Ֆ. Օհանեան

ծիքներ եւ անայնագործական առարկաների նմուշներ։ Այս նպատակով երկրագործութեան եւ պետական կալուածների կովկասեան լիազօր Մեղվեդեվ նշանակել է 300 ռուբլու մի գումար, որ եւ յանձնված է ցուցահանդէսի անայնագործական բաժանմունքի կառավարիչ Փիրալեանին։

—

Թիֆլիսում միաք է ծագել հիմնելու անասնարուժական ֆէլդշէրական օրինակելի ուսումնարան։

—

Կիրակի, նոյեմբերի 18-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում անդի ունեցաւ Թիֆլիսի գործակատարների նոր կազմակերպվող ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը, որին ներկայ էին մօտ 70 հիմնադիր անդամներ։ Պաշտօնական անձանց ընտրութիւնից առաջ, ժողովը միաձայն հաւանութեամբ, առանց քուէարկութեան, ընկերութեան պատուաւոր անդամ ընտրեց Գ. Ադէլխանեանին։ Ապա տեղի ունեցաւ ընկերութեան վարչութեան եւ վերատուգող յանձնաժողովի անդամների ընտրութիւնը։

—

Վերջին ժամանակ Ռուսաստանի պօստը անկանոն կերպով է ատացվում Թիֆլիսում, որովհետեւ Վլադիկավկազի ճանապարհի վրա տեղատեղ երթեւեկութիւնը բոլորովին դադարած է խոր ձիւնի եւ փլուածքների պատճառով։

—

«Торг.-Пром. Газета» լրագրում, որ ֆինանսների մինիստրութեան օրգանն է, տպագրված է հետեւեալ հաղորդագրութիւնը. «Մասնագիտական թերթերի մէջ շարունակում է քննվել արքունի հողերի կապալառու-նաւթարդիւնաբերողների յայտնի միջնորդութիւնը նաւթի պուդվճարը բաժնեվճարով փոխարինելու մասին։ Կասկած չը կայ, որ պայմանագրի հաստատման կապալառուները ոչ մի իրաւունք չունեն միջնորդութիւն յարուցանել այդպիսի փոփոխութեան մասին, թէպէտեւ, պայմանագրին ճշդութեամբ հետեւելու դէպքում, նրանցից շատերին սպառնում է անսնկութիւն։ Այն գները, որոնց պատճառով, չուկայի այժմեան դրութեան շնորհիւ, նաւթարդիւնաբերողները մեծ ծնաներ են կրում, առաջարկել են իրանք աճուրդների ժամանակ։ Միւս կողմից՝ նաւթարդիւնաբերողները գործի մէջ դրել են եւ իրանց դրամագլուխները ու նոյն իսկ գանձարանին էլ ձեռնտու է փոփոխել կապալի պայմանները։ Այս հարցը բարդվում է նրանով, որ նաւթային հողաբաժինների աճուրդի ժամանակ կային եւ ուրիշ մրցողներ, որոնք հողաբաժիններ չը ատացան շնորհիւ հէնց այն բանի, որ չը կամեցան վճարել կապալի համար այդպիսի բարձր գներ, յոյս չունենալով այդ գներով օգուտ ատանալ։ Մի խօսքով, այս հարցը բարդ է եւ կապված է, բացի կապալառուներից, նաեւ գանձարանի եւ մի ամբողջ շարք նաւթարդիւնաբերողների շահերի հետ։ Այս հարցի լուծման ամենացանկալի նախապատրաստական քայլը այն կը լինէր, որ նա բազմակողմանի եւ մանրամասն կերպով քննվէր նաւթարդիւնաբերողների համաժողովում»։

—

Թիֆլիսի ոստիկանապետը, ուշադրութեան առնելով, որ շուտով վերջնականապէս պէտք է կազմվի Թիֆլիսի դռնապաններին տրվելիք հրահանգը, կովկասեան կառավարչապետի հրատարակած պարտադիր կանոնների հիման վրա, առաջարկեց բոլոր ոստիկանական պրիստաւներին հաղորդել նրան իրանց կարծիքները այն մասին, թէ ինչով կարելի էր լրացնել հրահանգի այժմ կազմված նախագիծը, որքան նա իրագործելի է գործնական տեսակէտից եւ, նրանց կարծիքով, ինչ պակասութիւններ կան հրահանգի նախագծի մէջ։

—

Երէկ, նոյեմբերի 19-ին, Թիֆլիսի դատաստանական պալատը, հաստատելով Երեւանի նահանգական դատարանի վճիռը, արդար ճանաչեց Հայաբակ վարդապետ Արշարունուն եւ Սողոմոնեան ու Գալստեան քահանաներին, որոնք մեղադրվում էին ռուսադաւանութիւն ընդունած հայ գիւղացիներին նորից լուսաւորչական դաւանութեան դարձնելու մէջ։ Մեղադրեալներին պաշտպանում էր յայտնի փաստաբան երդուեալ հաւատարմատար Օպօչինին։

—

Համաձայն նոր կազմված օրինագծի, մասնաւոր ուսումնարաններ հիմնել եւ կազմակերպել թոյլ է տրվում ոչ միայն մասնաւոր անձանց, այլ եւ առեւտրական-արդիւնագործական աներին, գիտական եւ բարեգործական ընկերութիւններին, ինչպէս նաեւ քաղաքային, զէմստվոյի եւ դասակարգային հաստատութիւններին։ Օրինագծի մէջ յիշատակված են երեք տեսակ ուսումնարաններ,—տարրական, սկզբնական աւելի ընդարձակ ծրագրով եւ միջնակարգ ուսումնարաններ, նոյնպէս եւ ժամանակաւոր ու մշտական կուրսեր։ Նոյն օրինագծով թոյլ է տրվում բանալ նաեւ մանկական պարտէզներ։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ներկայացված է մի նախագիծ՝ Թիֆլիսի փողոցները կատարելագործված ձեւով քարելու մասին։ Նախագիծը կազմել է աւստրիացի ինժենէր Պիէր Գօսաէնի, որ յայտնի մասնագէտ է այդ գործերում։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ինչպէս հեռագրում են Պետերբուրգից «Донская Рѣчь» լրագրին, մտադրութիւն ունի թոյլ տալ համալսարաններում ազատ ունկնդիրներին քննութիւն բռնել ուսանողների հետ միասին համալսարանական դիպլոմ ատանալու համար։ Քննութեան ենթարկվող ազատ ունկնդիրները, համաձայն այդ մասին կազմված նախագծի, պարտաւոր են ներկայացնել հաստատութեան վկայական։ Այն դէպքերում, երբ ազատ ունկնդիրը առանձին աշխատութեամբ անցել է համալսարանական դասընթացքը, դիպլոմը կը տրվի եւ առանց հաստատութեան վկայականի՝ սակայն իրաքանչիւր անգամ դրա համար կը պահանջվի բարձրագոյն թոյլատրութիւն։

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ, լրագիրների ասելով, հարց է բարձրացել սահմանափակելու հրէայ ուսանողների թիւը այդ մինիստրութեան իրաւասութեան տակ գտնվող ուսումնարաններում։

—

Կովկասում անասունների ժանտախտի դէմ միջոցներ ձեռք առնելու եւ ոչնչացրած անասունների տէրերին վարձատրելու համար յատկացրված գումարը կովկասեան նահանգների մէջ բաժանված է այսպէս.—Բագուի եւ Գանձակի նահանգապետներին, ինչպէս նաեւ Զաքաթալայի շրջանի կառավարչին այդ նպատակով կը տրվեն 20,000-ական ռուբլի, Թիֆլիսի նահանգապետին—15,000 ռուբլի, Երեւանի նահանգապետին եւ Կարսի շրջանի կառավարչին—10,000-ական ռուբլի եւ Բաթումիի գինուորական նահանգապետին—5,000 ռուբլի։

—

ՇՈՒՇՈՒՀԻ մեզ գրում են. «Ամսոյս 11-ին հողին յանձնեցինք բժշկապետ Մարգարէ Առաստեանի մարմինը։ «Մշակի» մէջ տպված նրա կարճ կենսագրութեան մէջ ասված էր, թէ հանգուցեալը գործել է եւ Շուշում։ Ներկայ էր մեծ բազմութիւն, եղանակը պարզ, օրը կիրակի։ Արմաւիրը պակաս ունէր, Ատրպատականից հարիւրաւոր ցաւակցական հեռագիրներ են ատացվում մինչեւ այսօր էլ։ Իսկ Շուշին։ Զէ որ քիչ ժամանակում հանգուցեալը լաւ ծառայութիւններ է արել Շուշում։ Բարեկամներից չորս պակաս կայ։ Պատարագիչը Գառնակերեան եպիսկոպոսն էր։ Բենին վարդապետը դամբանական խօսեց»։

—

ՇՈՒՇՈՒՀԻ մեզ գրում են նոյեմբերի 15-ից. «Այսօր սիրողները յօգուտ քաղաքային օրիորդաց ուսումնարանի կը ներկայացնեն «Ակամայ բժիշկ» եւ «Առաջարկութիւն»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Այսօր, նոյեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 6-ին, Ղուբայի բանտի բակում կախեցին աւազակապետ Խասի Գիւլ Ալի օղլուն։ Նա ամենայն քաջութեամբ բարձրացաւ կախաղան։ Մահվան դատավճիռը կարդաց Բագուի նահանգական դատարանի քարտուղար Գավլով. թոկը գցեց աւազակի վզին Նիկոլաեվկա գիւղից՝ Միխայիլ Կօրիչենկո, որը հարիւր յիսուն ռուբլի վարձատրութիւն է ատացել։ Բազմութիւն շատ կար։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Թղթախաղը Պետերբուրգի հայ գաղութի մի որոշ մասի անհատներին ապրուստի միջոց է տալիս. այդ իրողութեան մասին մենք արդէն գրել ենք։ Այդ անհատներից մի քանիսին այս քանի օրերը քաղաքապետը պահանջել էր իրան ներկայանալու ու հարցրել էր թէ՝ ինչ միջոցներով են ապրում եւ այլն։ Վերջին օրերում «Бирж. Вѣдом.» եւ այլ տեղական լրագիրներում շատ խիստ եւ իրաւացի յօդուածներ կային թուղթ խաղացող հայերի մասին, բայց ինչպէս երեւում է, այդ մարդկանց վրա մասուլի ձայնը չէ ազդում։ Այս անգամ արձանագրելու եմ մի շատ ցաւալի իրողութիւն մեր ուսանողների կեանքից։ Պետերբուրգի հայ ուսանողները, հարուստ դասակարգին պատկանող ընտանիքներից, իրանց առհասարակ հայ ուսանողութիւնից հեռու են պահում, նրանք համալսարան յաճախելու փոխարէն, կլուբներ են յաճախում եւ թղթախաղով են զբաղվում։ Թող ընթերցողը կարծէ, թէ ա բամբասանք է իմ կողմից, քանի որ ուսանողը իրաւունք չունի իր համազգեստով կլուբ յաճախել թուղթ խաղալու։ Բայց այդ ուսանողները շատ հնարագէտներ են, համազգեստ հանած են գնում թուղթ խաղալու։ Թիֆլիսի հարուստ հայ ծնողների ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ ցաւալի իրողութեան վրա»։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Տեղիս մի խումբ հայ հարուստ տիկիններ մի տարի է, ինչ որ նպատակ ունեն այստեղ կանանց բարեգործական ընկերութիւն հիմնելու՝ հայ ուսանողուհիներին օգնելու համար։ Այդ տիկինները մի քանի անգամ ժողովվում են, խօսում են, բայց մինչեւ հիմա ոչ մի հետեւանքի չեն հասել։ Հրաւիրում ենք նրանց օրինակ վերցնել Պարսկաստանի իրանց քոյրերից եւ դիմել այդ գործին լուրջ կերպով եւ եռանդով։ Այստեղ կան մօտ 15 հայ ուսանողուհիներ, որոնց մեծ մասը կարօտ է օգնութեան։ Աւելորդ չենք համարում յայտնել, որ այդ տիկինները մինչեւ հիմա հաւաքած ունեն մօտ 500 ռուբլի մի գումար»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Հայ բեմի պարծանք տ. Հրաչեան այս տարի կովկասեան հանքային ջրերում բաւականաչափ կազդուրվելով՝ նորից մտադիր է իր ժանկութիւնից փայփայած ժայռենի բեմին ծառայել։ Ցարգելի տիկինը մտադիր է մեծ պատից իրան վայել մի ուժեղ անսամբլ կազմել մեր դերասանական խմբի կարեւոր ոյժերից եւ մի ընդարձակ ճանապարհորդութիւն անել սկսած Բագուից մինչեւ Պետերբուրգ։ Տիկինը նախ քան գործի սկսելը կերթայ Մօսկվա, ուր իր անձնական վերահսկողութեամբ զգեստներ պիտի կարել տայ 3,000 ռուբլի արժողութեամբ։ Տաղանդաւոր դերասանուհուն սրտանց աջողութիւն ենք ցանկանում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times» լրագիրը զարմանում է այն անզուսպ զայրոյթի բռնկման վրա, որ այժմ նկատվում է Գերմանիայում եւ որ արտայայտվում է անվերջ բողոքներով Զէմբէրլէնի արտասանած ճառի դէմ։ Անգլիական լրագրի խօսքով, Զեմբերլէն ասել է միայն այն, թէ 1870—71 թուերի պատերազմի ժամանակ գերմանական զինուորական իշխանութիւնները գործ էին դնում խատութեան նոյն միջոցները, որպիսիք ատիպված էին դործադրել եւ անգլիացիները նոյնանման պայմաններում։ Գաղթականութիւնների մինիստրը յայտնեց, թէ գերմանացիները բոլորովին իրաւացի կերպով գործադրում էին այդ միջոցները այն ժամանակ, ինչպէս իրաւացի կերպով անգլիացիներ գործադրում են հիմա։ «Ի՞նչ վիրաւորական բան կայ այստեղ ժողովրդական ինքնասիրութեան համար», հարցնում է «Times»։

—«Daily News» նորից վերադառնում է կենտրոնացրած բանակների եւ նրանց մէջ տիրող զարհուրելի ժահացութեան հարցին։ Պաշտօնական յայտարարութիւններում այդ ժահացութեան մեղքը վերագրում են բոէրների տգիտութեան եւ նրանց հակառակութեանը՝ հնազանդվելու բժիշկների պահանջներին եւ անհրաժեշտ առողջապահական միջոցներ ձեռք առնելու։ Լրագիրը այս առիթով նկատում է, որ Պորտ-Էլիսաբէտի բանակում, որտեղ բնակեցրած է նոյն «տդէտ» ժողովուրդը, ժահվան դէպքերի թիւը շատ չնչին է, որովհետեւ բժիշկների կազմը այնտեղ միշտ բաւարար է եղել՝ շնորհիւ այն բանի, որ այդ բանակում բժշկական օգնութիւն են հասցնում աֆրիկանդէր բժիշկները, մինչդեռ ուրիշ տեղերում, օրինակ, Պոտչեֆստրոմում, յունիսամսին 1000 երեխայից մեռել են 821-ը։

—Սերբիական պատգամաւորների ժողովում, ինչպէս հաղորդում են Բէլգրադի լրագիրները, լուրեր են պտտում, թէ Այէքսանդր թագաւորը մտածում է բաժանվել Դրագա թագուհուց։ Այդ լուրից յետոյ Վիէննայում տեղեկութիւն ատացվեց, թէ իբր սերբիական թագուհին մեռել է։ Նոյնպիսի լուրեր տարածվեցին եւ Բուդապեշտում ու Բերլինում։ Սակայն Բէլգրադից ատացված պաշտօնական տեղեկութիւնները բոլորովին հերքում են տարածված լուրերի ճշմարտութիւնը։

—Զինական կայսրուհու հրամանով արժանի յարգանք է մատուցվում նորերումս վախճանված Լի-Խունդ-Զանգի յիշատակին եւ հրամայվում է քարեայ յաղթական կամար կանգնեցնել ի պատիւ նրա այն գիւղում, ուր ծնվել էր չինական այդ նշանաւոր պետական անձը։ Բացի արանից նրա ազգ-որդուն եւ նրա սերնդին շնորհվում է մարկիզի տիտղոս, իսկ միւս որդիներին տրվում են պետական բարձր ատիճաններ եւ արդիւնաւոր պաշտօններ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 17-ին Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա, Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Ֆէօդորօվնայի ուղեկցութեամբ, ժամանեց Ցարսկոյե-Սելօից եւ այցելեց Գրինց Գեօրգիեվիչ Օլդենբուրգսկիի անուան Կայսերական հայրենասիրական ընկերութեան իգական դպրոցը, ուր ներկայ էր դպրոցի նոր երկյարկանի շինութեան օրհնութեանը։ Ապա Նորին Կայսերական Մեծութիւնը, Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Ֆէօդորօվնայի, նոյնպէս եւ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի եւ Իշխանուհի Անաստասիա Նիկոլաեվնա Բօսանօվսկայի Դքսուհի Լէյխտէնբերգայի ուղեկցութեամբ, այցելեց Կայսերական յախճապակեայ գործարանը։

ԼՕՆԴՕՆ։ Դուքս Տէկի հետ պատահած դժբաղդ դէպքի վերաբերմամբ լրագիրները հաղորդում են հետեւեալը. դուքսը որսում էր աղուէսներ. յանկարծ նրա ձին կախ ընկաւ մեռեալաթելի վրա եւ ընկաւ. դուքսը գլխիվայր ընկաւ, որից յետոյ նրան անզգայ դրութեան մէջ տարան հարեւան գիւղական խրճիթը։ Դուքսը ուղեղի ցնցումն ատացաւ, եւ բացի դրանից ծանր կերպով վնասված են ազդրները։ Բժիշկները յոյս ունեն, որ նա կը կազդուրվի մի քանի օրից յետոյ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Սարսափելի փոթորիկ է։ Կովկասեան շոգենաւերը ուշանում են մէկ եւ կէս օրով։

Քաղաքապետը նախազգուշացնում է բնակիչներին, թէ քաղաքում գողեր են երեւացել, որոնք գաղթել են Թէոդոսիայից, ուր նրանք խոշոր գողութիւններ են կատարել, եւ հրամանագրում է ոստիկանութեան բռնել նրանց։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ։ Նոյեմբերի 17-ին բացվեց վազապահների եւ զինեգործների հաւաժողովը։ Մասնակցում են յիսունից աւելի անձինք։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Ֆիննական զօրքերին գեներալ-նահանգապետի ուղղած հրամանով յայտարարված են Բարձրագոյն հրամաններ. ֆիննական զօրքերի պահեստի կազրը ոչնչացնել 1902 թուի յունվարի 1-ին եւ այժմ եւ ետ արձակել ի պահեստ ֆիննական ութ արագաձիգ բատալիոնների կամաւոր զինուորներին։ Վերջնականապէս արձակել ծառայութիւնից կամ ի պահեստ ֆիննական ութ արագաձիգ բատալիոնների զինուորներին գեներալ-նահանգապետի որոշած ժամանակամիջոցում։ Օֆիցէրներին թողնել ծառայութեան մէջ վերոյիշեալ բատալիոններում ոչ ուշ 1902 թուի մարտի 1-ից։ Ֆիննական զօրքերի հրամանատարին հրամանագրված է այժմ եւ ետ սկսել փոքր առ փոքր արձակել կազասեան, ուլլաբօրեան եւ կուօպիոյեան բատալիոնների բոլոր զինուորներին, բացի զօրանոցները եւ արքունական գոյքը պահպանելու համար ժամանակաւորապէս թողված զինուորներից։ Ոչնչացվող մնացած հինգ բատալիոնների արձակումը կատարել հերթով։

ՎԱՐՇԱՎԱ։ Դատաստանական կանոնագրքերի մացնելու քսան եւ հինգամեակի օրը նոյեմբերի 20-ին Վարշավայում կայանալու է շրջանի դատարանական գործիչների մեծ հաւաժողով։

ԿԻԵՎ։ Նահանգական դատարանում քննվեց պաշտօնաթող գնդապետ Մորդովսկու գործը, որը մեղադրվում էր քաղաքագլխի վրա յարձակում գործելու համար, երբ նա մտնում էր դումայի շինութիւնը։ Գնդապետ Մորդովսկի, լինելով քաղաքային ժողովրդական ընթերցարանի կառավարիչ, արձակված էր ծառայութիւնից իր կպիտ եւ անփոյթ վերաբերմունքի համար դէպի հասարակութիւնը։ Մորդովսկի դատապարտվեց վեց ամսվայ բանտարկութեան։

Քաղաքագլխի միջնորդութեան համաձայն, համալսարանի բժշկական ֆակուլտէտը որոշեց ձրի դասախօսութիւնների մի յատուկ դասընթացք կազմակերպել բժիշկների համար ժան-

տախտի հարցերի վերաբերմամբ։ Դասախօսութիւնները կը սկսվեն Նոյեմբերի 19-ին։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Նոյեմբերի 16-ին սկսվեցին աշխարհագրական ընկերութեան արեւելեան սիբիրեան բաժնի 50-ամեակի տօնախմբութիւնները։

Կեախտա հասաւ Կօզլօվի տիբէթեան արշաւախումբը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բօրսա Նոյեմբերի 16-ին։ Թիֆլիսի կալուածական բանկի 5% գրաւական թղթեր 88⁷/₈. Մանթաշեվ եւ Ընկ. ակցիաներ—158։

19 Նոյեմբերի

ԻՐԿՈՒՏՍԿ։ Աշխարհագրական ընկերութեան արեւելեան-սիբիրեան բաժնի 50-ամեայ յօբելեանը սկսվեց հանդիսաւոր ժողովանքով, ներկայութեամբ իշխանութիւնների, բաժանմունքի անդամների, պատգամաւորների եւ դրպրոցների աշակերտների, ուր ամսի 17-ին պարապմունքներ չը կային։ Ցերեկվայ 1 ժամին, քաղաքային թատրօնում կայացաւ հանդիսաւոր ընդհանուր ժողով։ Գեներալ-նահանգապետը կարդաց պետական-քարտուղար Կուլօվզինի հեռագիրը թագաւոր Կայսրի շնորհաւորութեամբ, որը հիացմունքով ընդունվեց։ Նուագախումբը ածեց հիմն։ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչի հեռագիրը բուռն ծափահարութիւններով ընդունվեց եւ ածեցին պրէօբրաժէնեան մարշ։ Աշխարհագրական ընկերութեան խորհրդի հեռագիրը, որ կրում էր փոխնախագահ Սեմեոնովի ստորագրութիւնը, ծափահարութիւններով ընդունվեց։ Նախագահ Մակովէցկու ճառը տեւեց կէս ժամ, ապա սկսվեց հարիւրից աւելի պատգամաւորների եւ մօտ վաթսուն պատգամաւորութիւնների ընդունելութիւնը Տօմսկից, Կրասնօյարսկից, Մինուսինսկից, Կեախտայից։ Տօմսկի համալսարանը ուղարկեց պրոֆէսոր Սապոժնիկովին։ Ուղերձներ ուղարկված են համալսարաններից, գիտական ընկերութիւններից, թանգարաններից, հասարակական հիմնարկութիւններից, դումաներից եւ այլն։ Ստացված են 200-ից աւելի հեռագիրներ։ Ժիլ Լիրի ճառին հետեւեց մարսելիէզ, որ լսեցին ոտի վրա կանգնած։ Ժամը 7-ին դումայի շինութեան մէջ տեղի ունեցաւ ճաշ. շատ կենացներ առաջարկվեցին։ Թանգարանի շինութիւնը եւ մի քանի մասնաւոր տներ զարդարված են դրօշակներով եւ երեկոյեան լուսավառված են։ Շնորհաւորութիւններ ստացված են Պարիզից, Վիէննայից, Հռոմից եւ արտասահմանեան այլ քաղաքներից։

ՎԱՐՇԱՎԱ։ Փոխադարձ ապահովագրութեան վարչութիւնը միջնորդեց եւ թոյլտւութիւն ստացաւ հրաւիրել ժամանակցելու հրդեհներից կրած վնասները որոշելու համար գիւղական եւ քաղաքային հոգեւորականութիւնը, ժողովրդական դպրոցների ուսուցիչներին եւ զէմստվոի կրէդիտային ընկերութեան խորհրդականներին, օրպէս բարոյական եւ մտաւոր բարձր հեղինակութիւն վայելող անձանց տեղական ազգաբնակութեան մէջ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Նոյեմբերի 18-ին հանդիսաւոր կերպով բացվեց Պետերբուրգի միջազգային առեւտրական բանկի բաժանմունքը։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ։ Գինեգործների համաժողովը հարց է յարուցանում Թէօդոսիայի գաւառում գինեգործների դպրոց բանալու մասին։

ԵԱԼՏԱ։ Լեռները ձիւնով են ծածկված։ Տաքութիւնը իջաւ։

ՆՈՎՈՉԷՐԿԱՍԿ։ Նոյեմբերի 18-ին այստեղ բացվեց Դոնի շրջանի գիւղատնտեսների համաժողովը։ Համաժողովում Մոսկվայի գիւղատնտեսական ընկերութեան նախագահ իշխան Շչէրբատով զեկուցեց մասնաւոր տաւարի զարգացման մասին Դոնի վրա։

ՀՌՕՄ։ Ֆինանսների մինիստրի հաշվի համաձայն, բիւդժէտը 45 միլիոն աւելորդ տուեց փոխանակ կարծված 7 միլիոն պակասորդի։

Կ. ՊՕԼԻՍ։ Նորերս տեղեկութիւններ են ստացվել հայերի դէմ քիւրդերի գործած բռնութիւնների առանձին դէպքերի մասին Մուշի, Բիթլիսի եւ Սասունի շրջաններում։

ԱԹԷՆՔ։ Միտրոպոլիտ Գրիգորի հաստատում է, որ իր հրաժարականը անվաւեր է, որովհետեւ ինքն երբէք հրաժարական չէ խնդրել սինոդից։ Այդ հարցը շատ է հետաքրքրում հասարակական կարծիքը։ Կառավարութիւնը վրճռեց չը թոյլ տալ, որ միտրոպոլիտը նորից ստանձնէ պաշտօնը։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն 1902 թ-ի յունվարի 1-ից յետոյ (նոր ոճարով) ոչ ոքին չի թոյլ տրվի մտնել Կապի գաղթականութիւնը կամ Նատալ առանց առանձին գրաւոր թոյլտւութեան։ Թոյլտւութիւն ստանալու համար պահանջվում է վկայութիւն ի միջի այլոց եւ այն բանի մասին, որ ճանապարհորդը ունի ոչ պակաս հարիւր ֆունտ ստերլինգից կամ առհասարակ կարող է իր գլուխը պահել, եւ որ նրա ճանապարհորդութեան նպատակը թշնամական չէ Անգլիային։ Օտար պետութիւնների հպատակները վկայագիր են ստանում իրանց դեսպանատներից Լոնդոնում։ Այդ վկայագիրը ճանապարհորդին իրաւունք է տալի միայն ափ իջնել հարաւային Աֆրիկայում, բայց ամենեւին չէ ապահովում նրա իրաւունքը շարունակելու ճանապարհը դէպի երկրի ներսը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զքաւոր երեխաներին խնամող ընկերութիւնը, Նոյեմբերի 21-ին եւ 22-ին, Փառքի տաճարում, տարքում է զանազան նուիրված առարկաների

ՎԱՃԱՌՔ

Մուտքի գինը 20 կոպէկ։ Այդ օրերում Փառքի տաճարում կը նուագէ զինուորական երաժշտական խումբը։ 1—2

„ՋԻՒԱՆՈՒ ՔՆԱՐԸ“

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ.

Մի անգամ էլ ապացուցվեց այն բանը, որ մեզանում շատ դժուար է, կամ անկարելի է բաժանորդագրութեան յայտով մի ստուար գիրք հրատարակելը։ Բացի հարկաւոր չափով ստորագրվողներ չը լինելը, եղան եւ այլ խոչոր հանգամանքներ, որոնք պատճառ դարձան հէնց ա. հատորը լոյս հանելուց յետոյ առժամանակ ընդհատելու մեր սկսած գործը։ Այժմ այդ գործը դրվել է նոր, ամուր հիմքերի վրա, եւ առաջիկայ փետրվարից Ալէքսանդրօպոլում Սանոյեանցի տպարանից յաջորդաբար պիտի հրատարակվեն մնացած հատորները եւ միւսը միւսի յետեւից ուղարկվեն մեր բաժանորդներին, այնպէս որ նրանք թէեւ ուշ, բայց կը ստանան այն ամենը, ինչ որ խոստացվել է յայտարարութեան մէջ։

Բաժանորդագրութիւնը փակված է։ 2—2

ՀԱՄԼԷՏԻ ԴԵՐԵՐՈՒՄ

Տ. ՍԻՐԱՆՈՑԾԻ

նկատրված 10 զանազան տեսակ լուսանկար պատկերները (կաբինէտ դիրքով) վաճառվում են Թիֆլիսում. 1) «Գուտէնբերգ» գրավաճառանոցում. 2) Երիրեանցի խանութում (Երեւանեան հրապարակի վրա). 3) «Գրոգրէս» ծբխախոտի խանութում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, ժողովարանի տակը։

Նկարված կան նաեւ սաէրէսկոպի համար 10 տեսակ։ Իւրաքանչիւր հատը արժէ 30 կ. օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Թիֆլիս, «Գուտէնբերգ» գրավաճառանոցը։ 1—3

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի հոգաբարձութեան խորհրդարանում սոյն Նոյեմբերի 28-ին երեկոյեան ժամի 8-ին լինելու է աճուրդ կապալով տալու 1-ն յունվարի 1902 ամի վերնայարկը, դպրոցապատկան տան, որ գտնվում է քաղաքի 3-րդ մասում Սօլդատսկի բազարում։ Պայմանները կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատանը ամենայն օր բացի, տօներից, ժամի 10-ից մինչեւ 2-ը։ 1—2

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի հոգաբարձական խորհրդարանում այս Նոյեմբերի 28, երեկոյեան ժամի 8-ին լինելու է աճուրդ կապալով տալու 4 տարի ժամանակով, 1-ից յունվարի 1902 թ. Սաղումը քաղաքիս VIII մ. եղած, հանդուցեալ Օքսեանցի նուիրած կալուածքը (այժմս պանդոկ), որից ստացվում է տարեկան 1226 բուբլի։ Պայմանները կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատանը ամենայն օր, բացի տօներից, ցերեկվայ ժամի 10—1։ 1—3

ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐՔԵՐԻ ՊԱՀԵՍՏ

„ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ“

Պետերբուրգ, Նեւսկայա, 21։

«Իրաւաբանական օգնութեան» գործունէութեան ծրագիրն է.

1) Հրատարակել իրաւաբանական գրքեր.

2) Կատարել պատուէրներ շուկայում վաճառվող գրքերի վերաբերմամբ.

3) Տալ գրաւոր ցուցումներ եւ տեղեկութիւններ, որոնք վերաբերում են իրաւաբանական գրականութեան։ (Պատասխանի համար պէտք է ուղարկել երկու 7 կոպ. մարկա)։

4) Ստանալ եւ ուղարկել պօստով տեղեկութիւններ այն գործերի մասին, որոնք գրանվում են սենատում եւ կառավարչական այլ հիմնարկութիւնների մէջ։ (Վարձատրութիւնը ամեն մի տեղեկութեան համար եւ ամեն մի գործի համար—3 բուբլի)։

5) Տալ գրաւոր ցուցումներ, բացատրութիւններ եւ եզրակացութիւններ իրաւունքի եւ գործող օրէնսդրութեան վերաբերմամբ (վարձատրութիւնը ըստ պայմանի)։

6) Ընդհանրապէս աջակցութիւն եւ օգնութիւն ցոյց տալ այն բոլոր անձանց, որոնք դիմում են իրաւագիտութեան վերաբերեալ հարցերով, տեղեկութիւններով եւ յանձնարարութիւններով։

Ըստ պահանջման ուղարկվում է ձրիաբար պահեստի հրատարակած «Սիստեմատիկական եւ առարկայական կատալոգ իրաւագիտութեան եւ հասարակագիտութեան»։

№ 63705. 1—1

ԺԱՄԱՑՈՑՑ ՁՐԻ



Ով կամենում է ձեռք բերել բոլորովին ձրի ծոցի ժամացոյց թէ տղամարդու եւ թէ կանանց, ամերիկեան իսկական ոսկուց, որ ամենաբարձր յատկութիւն ունի եւ ոչնչով չէ զանազանվում ոսկեայ ժամացոյցներից, թող նա ուղարկէ մի բուբլի, եւ նրան կուղարկվի ժամացոյցը 11 բուբլու վերադիր վճարով. բացի սրանից, նրան կուղարկվեն 12 կուպօններ, մի-մի բուբլի արժողութեամբ։ Այդ կուպօնները հեշտութեամբ կարելի է ծախել ծանօթների շրջանում եւ այդպիսով յետ ստանալ ժամացոյցի համար վճարած փողերը։ Իսկ այն անձը, որ գտել է կուպօնը եւ ուղարկել իմ խանութը, կը ստանայ 12 բուբլի արժեցող ժամացոյցը 11 բուբլով եւ նոյնպէս 12 կուպօն, մի-մի բուբլի արժողութեամբ՝ վաճառելու համար։ Այսպիսով կարելի է ձեռք բերել եւ արծաթեայ ծածկոյթով ժամացոյց (րէմօնտուար) Ֆորժ Ֆաբէր Ժակօի ամենալաւ գործարանից, 15 բուբլի արժողութեամբ։ Հասցէն—Роману Люботкину, Складъ женевскихъ часовъ въ Варшавѣ, Королевская, № 47։

№ 106, 523. 2—3

Ստացել ենք Մոսկվայի յայտնի առեւտրական տուն

Ա. եւ Ր. Ռոյզենցվայգից

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Թէ ապրանքի յատկութեան եւ թէ գների էժանութեան կողմից՝ ոչ ոք չէ կարող մրցել։ Ցանկացողները կարող են անձամբ համոզվել։

Ընդունում ենք նաեւ ամեն տեսակ ՊԱՏՈՒՐՆԵՐ, արտասահմանի եւ Ռուսաստանի կտորներից (матерія)։ Դիմել՝

ԵՂԲ. Վ. եւ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻՆ

Գոլովինսկի պրոսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ։ 6—10

НИВА

52 №№
ПЕРВЫЕ
12 ТОМОВЪ
Полнаго Собранія
Сочиненій

ПОДПИСНАЯ ЦѢНА

на 1902 годъ со всѣми приложеніями:

БЕЗЪ ДОСТАВКИ въ С. Петербургѣ 5 р. 50 к.

БЕЗЪ ДОСТАВКИ 1) въ Москвѣ, въ Конторѣ Н. Печковской—6 р. 25 к. 2) въ Одессѣ, въ книжномъ магазинѣ „Образованіе“—6 р. 50 к.

Со доставкою въ С.-Петербургѣ 6 р. 50 к.

Съ пересылкой во всѣ города и мѣстности Россіи. 7 р.

За границу *10 р.*

Разсрочка платежа въ 2 и 3 срока.

даетъ своимъ подписчикамъ въ **1902** Г.

художественно-литературнаго журнала „НИВА“, заключающаго въ себѣ въ теченіе года около 1500 столбцовъ текста и 500 гравюръ и рисунковъ.

Н. С. ЛѢСКОВА,

отпечатанныхъ четкимъ шрифтомъ на хорошей бумагѣ, съ портретомъ и біографическимъ очеркомъ, составленнымъ Р. И. Сементковскимъ. Остальные томы сочиненій Лѣскова подписчики получатъ въ 1903 г., при чемъ наше собраніе сочиненій Лѣскова будетъ значительно дополнено произведеніями, не вошедшими въ прежнія изданія или еще вовсе не напечатанными.

Полное Собраніе Сочиненій въ 12 ТОМАХЪ

В. А. ЖУКОВСКАГО,

дополненныхъ, подъ редакціею профессора А. С. Архангельскаго, цѣлымъ рядомъ неизданныхъ поэтическихъ произведеній знаменитаго писателя и отпечатанныхъ четкимъ шрифтомъ, въ 2 столбца, расширеннаго формата, на хорошей бумагѣ, съ портретомъ и біографическимъ очеркомъ.

12 КНИГЪ „ЕЖЕМѢСЯЧНЫХЪ ЛИТЕРАТ. ПРИЛОЖЕНІЙ“ (романы, повѣсти, разсказы, популярно-научныя статьи, очерки и проч. современныхъ авторовъ).

12 №№ „Парижскихъ модъ“ (до 300 модныхъ гравюръ по послѣднимъ фасонамъ лучшихъ мастеровъ).

12 №№ рукодѣльныхъ и выпильныхъ работъ и выкроекъ въ натуральную величину (около 600 рисунк. и чертеж.).

Стѣнной календарь на 1902 г., отпеч. краск.

Подробное иллюстрированное объявленіе о подпискѣ высылается безплатно.

Требованія адресовать въ Главную Контору журн. „НИВА“, С.-Петербургъ, М. Морская, 22.

1—1 М. 74055.

Дозволено Цензурою, Тифлисъ, 18 Ноября 1901 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.